

**Աշխատանքային խումբ`**

Նարինե Ռշտունի, Մարիա Մխիթարյան, Արման Դանիելյան

**Հարցման խումբ`**

Աննա Ռշտունի, Վարդան Ալեքսանյան, Արթուր Սիմոնյան,  
Էմմա Բալասանյան

**Խմբագիր`**

Լատիրա Բաղդասարյան

«Քաղաքացիական հասարակության զարգացման միություն»

Հասցե` 375002, Երեւան, Մոսկովյան 31/19

հեռ./ֆաքս. (3741) 53 32 83, բջջ. (3749) 40 36 09

Էլ փոստ. csdu@csdu.am, www.csdu.am

«Ազատագրվածների եւ բանտարկյալների իրավունքների պաշտպանության միություն»

Հասցե` 375025, Երեւան, Չարենցի 4/76

հեռ./ֆաքս. (3741) 55 33 14, բջջ. (3749) 40 55 28

Էլ փոստ. rshtuni@freenet.am

«Քաղաքացիական հասարակության զարգացման միությունը» եւ «Ազատագրկվածների եւ բանտարկյալների իրավունքների պաշտպանության միությունը» մոնիտորինգի ընթացքում ցուցաբերած ժամողակության համար շնորհակալություն են հայտնում

- ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակին, ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ -ին, Վարչապա
- Մարդու իրավունքների Հելսինկյան հիմնադրամին, Լեհաստան
- ՀՀ Արդարադատության նախարարությանը եւ անձամբ Համակարգային բարեփոխումների վարչության պետ պ-րն Ն. Առուստամյանին
- Քրեական պատիժների իրականացման վարչությանը եւ հատկապես՝ վարչության պետի տեղակալ պ-րն Վ. Մելքոնյանին, դաստիարակչական հարցերով բաժնի պետ պ-րն Ս. Պետրոսյանին
- Մարդու իրավունքների պաշտպանության «Տանիք» հասարակական կազմակերպությանը

## Բովանդակություն

Նախաբան .....	5
Ուսումնասիրության մեթոդները.....	9
Նախնական կալանք .....	12
Մեկուսարանների տեղադրվածությունը.....	16
Հանձնուք .....	17
Տեսակցություններ .....	20
<i>Տեսակցության սպասում</i> .....	20
<i>Տեսակցության սենյակներ</i> .....	20
<i>Մինչև 5 տարեկան երեխաների հետ տեսակցություն</i> .....	24
<i>Տեսակցությունների իրական լինելը</i> .....	25
<i>Հեռանկարները</i> .....	31
Նամակագրություն .....	35
<i>Հեռանկարները</i> .....	38
Եզրակացություններ եւ առաջարկություններ .....	41
Վերջաբան .....	49
Ծանոթագրություն .....	52
Օրենսդրություն .....	54
<i>ՀՀ Մահմանադրություն</i> .....	54
<i>Միջազգային օրենսդրություն</i> .....	54
<i>Տեղական օրենսդրություն</i> .....	58
Գրականության ցանկ .....	63

## Ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձավ

- Ø Հանդիպում են դեպքեր, երբ բարեկամներին ձերբակալության մասին հաղորդման ժամկետները ձգձգվել են 1-ից մինչև 15 օր: Էջ 12
  
- Ø Հարցված կալանավորների եւ նրանց բարեկամների 40%-ն ընդհանրապես չեն փորձել ստանալ տեսակցության թույլտվություն: Էջ 27
  
- Ø Նախքան դատավճռի կայացումը տեսակցություն ստանալու 99 փորձերից միայն 14 են պսակվել հաջողությամբ: Էջ 28
  
- Ø Քննիչների 82%-ը նշում է, որ տեսակցության համաձայնություն տրվում է խիստ հազվադեպ: Էջ 28
  
- Ø 60%-ից ավելի դեպքերում մերժումները հիմնավորվում են այն բանով, որ տեսակցությունը չի թույլատրվում օրենքով: Էջ 29
  
- Ø 22 քննիչներից ընդամենը 4-ն էին միանշանակ կողմ տեսակցությունների թույլտվությանը: Էջ 32
  
- Ø Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի ոչ մի քննչական մեկուսարանում չի եղել նամակագրության պաշտոնական թույլտվության դեպք: Էջ 35
  
- Ø Քննիչների 82%-ը եւ դատավորների 95%-ը նշում են, որ նամակագրության թույլտվություն ստանալու խնդրանքով դիմում են խիստ հազվադեպ: Էջ 37

## Նախաբան

Մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան հիմնադրամի օժանդակությամբ եւ ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ ֆինանսական աջակցությամբ «Քաղաքացիական հասարակության զարգացման միությունը» եւ «Ազատագրկվածների եւ բանտարկյալների իրավունքների պաշտպանության միությունը» 2001թ. օգոստոս-նոյեմբերի ընթացքում ՀՀ քննչական մեկուսարաններում անցկացրեցին արտաքին աշխարհի հետ շփման (ձերբակալման մասին տեղեկացնելու, տեսակցության, նամակագրության, հանձնուքի) իրավունքի պահպանման մոնիտորինգ: Այն նպատակ ուներ ուսումնասիրել կալանավորված/ձերբակալված անձնավորության իր հարազատներին ու ընկերներին այդ մասին հաղորդելու հնարավորությունները, քննչական մեկուսարաններում գտնվողների իրենց հարազատների ու ընկերների հետ տեսակցություն ստանալու, դրանց ընթացքի պայմանները, ընտանիքի հետ նամակագրության միջոցով կապ պահպանելու, հանձնուք ստանալու հնարավորություններն ու պայմանները, հետեւաբար՝ բացահայտել այս բնագավառում առկա իրական վիճակը, հանդես գալ օրենսդրության մեջ, կիրառվող պրակտիկայում փոփոխություններ կատարելու առաջարկություններով:

Հենց նշված ժամանակահատվածում անցկացված մոնիտորինգը ձեռք է բերում հատուկ նշանակություն, քանի որ Հայաստանի Եվրոպայի խորհրդին անդամակցության կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում ազատագրկման վայրերում մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, հոկտեմբերի 1-ից (մոնիտորինգի անցկացման եւ հաշվետվության ընթացքում) ուղղիչ-աշխատանքային հիմնարկները եւ քննչական մեկուսարանները Ներքին գործերի նախարարության ենթակայությունից անցան Արդարադատության նախարարության ենթակայության տակ: Բացի այդ,

ընթանում են քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների նախապատրաստման աշխատանքները, ՀՀ ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունեց «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի նախագիծը: Մոնիտորինգի նախապատրաստման ընթացքում հաշվի են առնվել միջազգային նորմերի պահանջները, ինչպես նաև այն փաստը, որ Հայաստանի քննչական մեկուսարաններում կալանավորների պահպանման փորձը ցույց է տալիս՝ բավական դժվար է տեսակցության թույլտվություն ստանալ ինչպես նախաքննության, այնպես էլ դատական քննության ժամանակ: Ներկայումս գործող օրենսդրությունը, մասնավորապես դատավարության մասնակիցների բոլոր փոխհարաբերությունները կանոնակարգող Քրեական դատավարության օրենսգրքում չկան տեսակցություններն արգելող կամ թույլատրող հիշատակումներ: 1969 թվականին ընդունված եւ մինչ օրս գործող «Հայկական ԽՍՀ-ում նախնական կալանքի վերցնելու կանոնադրությունում» ընդամենը նշվում է, որ տեսակցության կամ նամակագրության թույլտվությունը կարող է տալ քրեական գործը վարող մարմինը, սակայն չեն կանոնակարգվում դրանց թույլատրման կոնկրետ դեպքերը, առիթները: Քննչական մեկուսարանների վարչակազմը տեսակցության թույլտվությունը տալիս է բացառապես քրեական հետապնդումն իրականացնող մարմնի համաձայնությամբ: Նախաքննությունը կարող է տեւել երկու ամսից մինչեւ մեկ տարի, գործի դատաքննությունը՝ էլ ավելի երկար, արդյունքում մեղադրյալը կամ ամբաստանյալը զրկվում է բարեկամների հետ գոնե հազվադեպ տեսնվելու հնարավորությունից: Արդյունքում խախտվում է մարդու ընտանեկան կյանք ունենալու իրավունքը: ԵԱՀԿ /ԺԻՄԻԳ «ԵԱՀԿ տարածաշրջանում նախնական կալանքի խնդիրը» հաշվետվության մեջ նշվում է, որ «կալանավորված անձանց եւ նրանց հարազատների, բարեկամների միջեւ շփումների հնարավորության տրամադրումը ինքնըստինքյան խիստ կարեւոր է»:

Մոնիտորինգն անց է կացվել նախկին կալանավորների, նրանց հարազատների, քննիչների, դատավորների, փաստաբանների հետ հարցազրույցների, հարցումների միջոցով: Այցելել ենք եւ ուսումնասիրել Ներքին գործերի նախարարության/ Արդարադատության նախարարության բոլոր 6 մեկուսարանների, ինչպես նաեւ ՀՀ ԱԱՆ քննչական մեկուսարանի տեսակցության սենյակները և հանձնուքների ընդունման կետերը: Զրուցել ենք քննչական մեկուսարանների պետերի, տեսակցությունների համար պատասխանատու աշխատակիցների հետ:

Այս ոլորտում իրական պատկերը բացահայտելու, օրենսդրության, գործնականում կիրառվող փորձի բարեփոխումների ուղղությամբ առաջարկություններ անելու նպատակով մոնիտորինգը ներառնում էր անհատի հարազատներին կամ մերձավորներին ձեռքակալության մասին տեղյակ պահելու հնարավորության, նրանց տեսակցության պայմանների, նամակագրության միջոցով նրանց կապը պահպանելու, հանձնուք ստանալու պայմանների ուսումնասիրությունը:

Մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ քննչական մեկուսարաններում տեսակցության թույլտվություններ բավական հազվադեպ են ստանում: Այսպես, ուսումնասիրությունը անց կացնելու պահին միջին հաշվով մեկ ամսվա ընթացքում տեսակցության թույլտվություն էր ստանում 100 մարդուց մեկը: Վերջին մի քանի տարիների ընթացքում ոչ մի մեկուսարանում առհասարակ չի եղել պաշտոնապես թույլատրված նամակագրության որևէ դեպք<sup>1</sup>:

Բոլոր մեկուսարաններում կային տեսակցությունների համար նախատեսված սենյակներ, սակայն համարյա բոլորն ունեն վերանորոգման կարիք, վատ են ջեռուցվում եւ օդա-

---

<sup>1</sup> Տվյալները ձեռք են բերվել Քրեական պատիժների իրականացման վարչությունից:

փոխվում: Տարբեր մեկուսարանում տեխնիկական հագեցվածությունը տարբեր էր: Համարյա բոլոր մեկուսարաններում կային մինչև 5 տարեկան երեխաների հետ թույլատրված ամենամսյա տեսակցությունների առանձին սենյակներ:

ՆՆ/ԱՆ հինգ եւ ԱԱՆ քննչական մեկուսարաններում հանձնույթների կետերը սենյակներ էին ընդունման պատուհաններով: Մեկ դեպքում պատուհանը դուրս էր գալիս փողոց, այսինքն՝ անկախ եղանակից կալանավորների բարեկամները ստիպված են գտնվել փողոցում հանձնույթի բլանկը լրացնելու, հանձնույթի գնման ընթացքում:

Այսպիսով՝ պրակտիկայում չի պահպանվում կալանավորների արտաքին աշխարհի հետ շփվելու իրավունքը: Աժում գտնվող օրենքի նախագիծը կոչված է արմատապես փոխելու այս հարցի հետ կապված իրավիճակը: Մակայն կան մտավախություններ, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կծագեն մի շարք բարդություններ կապված ամրագրված փորձի, ձերբակալվածների եւ նրանց բարեկամների օրենքի չիմացության, նախնական պահպանման մեկուսարանների եւ քննչական մեկուսարանների տեխնիկական հնարավորությունների հետ (տեսակցությունների համար սենյակների տարողունակությունը, նամակների գրաքննության հարցերը եւ այլն):



## Ուսումնասիրության մեթոդները

Ուսումնասիրությունը բաղկացած էր երեք մասերից.

- հայաստանյան եւ միջազգային օրենսդրության համեմատական վերլուծություն,
- ՀՀ տարածքում գտնվող բոլոր քննչական մեկուսարանների վարչակազմերի հետ հարցազրույցներ, տեսակցությունների, նամակագրության, հանձնուքի պայմանների եւ հնարավորությունների դիտարկում. յուրաքանչյուր մեկուսարանի դեպքում լրացվել են դիտարկումների թերթիկներ,
- սոցիոլոգիական հարցումներ:

Ուսումնասիրությունն անց է կացվել Երեւանում, Աբովյանում, Վանաձորում, Գորիսում, Գյումրիում, կատարվել են այցելություններ Հայաստանի բոլոր 7 մեկուսարանները:

Խումբը հարցումը հիմնականում անց է կացրել Երեւանում, բայց քանի որ N1 մեկուսարանում պահվում են նաեւ կալանավորներ մերձակա շրջաններից, հարցերին պատասխանել են նաեւ նրանց՝ այդ շրջաններում բնակվող բարեկամները: Կալանավորներից հարցման են ենթարկվել ինչպես արդեն կալանքից ազատվածները, այնպես էլ գաղութում գտնվողները, որ մեկուսարաններից այդտեղ էին տեղափոխվել վերջին ամսվա ընթացքում:

Հարկ է նշել, որ քննչական մեկուսարանների նախկին կալանավորների (որոնք հարցման պահին արդեն ազատության մեջ էին) եւ ներկայիս կալանավորների հարազատների հարցման արդյունքները կարող էին ավելի լավատեսական լինել իրավի-

Ճակի իրական պատկերի համեմատ. նրանց մեծ մասին առաջարկել էին փաստաբանները (որոնց ծառայությանն իրականում դիմում են քիչ թվով կալանավորներ): Հիմնականում նրանք ծանոթ էին իրենց իրավունքներին եւ փորձում էին դրանք կիրառել: Իսկ քննչական մեկուսարաններից գաղութներ տեղափոխված կալանավորներից գրեթե բոլորը հարցման ընթացքում պնդում էին, որ տեսակցությունն ու նամակագրությունը արգելվում են օրենքով մինչեւ դատավճռի կայացումը:

Հարցվել են ներքին գործերի եւ դատախազության քննչական բաժինների քննիչներ, առաջին ատյանի դատարանների եւ վերաքննիչ դատարանի դատավորները:

Մոնիտորինգն անց է կացվել 2001 թ. օգոստոս-նոյեմբերի ընթացքում:

Ազատագրված եւ քննության տակ գտնվող անձանց տեսակցության եւ նամակագրության իրավունքի պահպանման մոնիտորինգի մեթոդներից մեկը նշված անձանց եւ այս բնագավառի հետ անմիջական կապ ունեցողների հարցումն էր: Արդյունքների լիարժեքությունն ապահովելու համար անհրաժեշտ է խնդիրն ուսումնասիրել տարբեր կողմերից. հենց այս սկզբունքով են կազմվել տարբեր ընտրանքները: Հարցումն անց է կացվել նրանց մեջ, ովքեր ոչ հեռու անցյալում գտնվում էին քննության տակ (գաղութների կալանավորները եւ իրենց պատժի ժամկետն ավարտած, ազատված անձինք), նաեւ՝ կալանավորների բարեկամների, փաստաբանների, քննիչների եւ դատավորների մեջ: Համապատասխանաբար կազմվել են հինգ հարցաթերթիկներ, որոնց բովանդակությունը փոփոխվում էր ընտրանքի առանձնահատկությանը եւ տարբեր խմբերի մեջ հարցման կոնկրետ նպատակներին համապատասխան: Օրինակ, կալանավորների, նախկին կալանավորների, նրանց հարազատների հարցաթերթիկը վերաբերում էր տեսակցության եւ նամակագրության թույլտվու-

թյուն ստանալու կոնկրետ դիմումներին (իրենց հետագա դրական եւ բացասական պատասխաններով, մերժումների փաստարկներով), տեսակցությունների ընթացքի, հանձնուժների փոխանցման պայմաններին եւ այլն:

Քննիչների, փաստաբանների եւ դատավորների հարցումը վերաբերում էր նրանց պրակտիկային եւ ձեռքբերած փորձին: Ելնելով այն բանից, որ Ազգային ժողովի քննարկմանն է դրված օրենքի նախագիծը եւ շուտով կարող է բարձրանալ դրա կյանքի մեջ ներդնելու, գոյություն ունեցող պրակտիկայի փոփոխման հարցը, մեզ հետաքրքրում էր նաեւ քննիչների, փաստաբանների եւ դատավորների կարծիքները ինչպես գործող պրակտիկայի, այնպես էլ հնարավոր փոփոխությունների մասին. մի բան, որ հիմք կտա ապագայի համար իրավիճակը կանխատեսելու, մի շարք ընդունելի առաջարկություններ անելու համար:

Հարցվել են.

- 32 կալանավորներ եւ նախկին կալանավորներ,
- կալանավորների 51 հարազատներ (կալանավորների, ներառյալ նաեւ նախկին, նրանց հարազատների հարցումների արդյունքները միավորվել են, քանի որ հարցաթերթիկները լիո-վին նույնն էին, այսպիսով՝ հարցման է ենթարկվել 83 մարդ):
- 22 քննիչ,
- 25 փաստաբան,
- 20 դատավոր:


## Նախնական կալանք

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 63 հոդվածի համաձայն կասկածյալի հարազատներին նրա կալանավորման մասին հայտվում է անմիջապես, բայց ոչ ուշ, քան ազատագրկման պահից 12 ժամվա ընթացքում: Ընդ որում, օրենքի համաձայն, դա անում է քննչական հետապնդումն իրականացնող մարմինը, եւ ամենեւին ոչ ինքը՝ ազատագրկվածը, որը հնարավորություն չունի անձամբ զանգահարելու նրան, ում անհրաժեշտ է համարում, եւ հաղորդելու իր կալանավորման մասին: Հետեւաբար՝ օրենքի դրույթը կալանավորին իրավունք չի տալիս անձամբ զանգելու, եւ զանգը թույլատրելու կամ արգելելու հնարավորությունը դառնում է բացառապես ՆԳ մարմնի աշխատակցի կամ քննիչի մենաշնորհը:

Ինչպես ցույց է տալիս հարցումը, կալանքից հետո այդ մասին ավելի հաճախ հաղորդվում է կալանավորի մերձավոր հարազատներին (այդպես են պատասխանել հարցման ենթարկված կալանավորների եւ նրանց հարազատների 64%-ը, եւ բոլոր 22 քննիչները): Ընդ որում պետք է նկատել, որ խիստ հազվադեպ են փաստաբաններին տեղյակ պահելու դեպքերը: Այս տարբերակը չի ընտրել ոչ մի կալանավոր, եւ ընդամենը՝ մեկական մարդ հարցված հարազատներից, փաստաբաններից եւ քննիչներից:

Դեպքերի 1/3 –ում կալանքը տեղի է ունենում հարազատների ներկայությամբ: Մնացած դեպքերում տեղեկացումը կատարվել է օրենքով նախատեսված 12 ժամվա ընթացքում (կալանավորների հարազատների 60%-ը եւ նրանք, ում կալանավորել են առանց հարազատների ներկայության, փաստաբանների 24 %), մեկ օրվա ընթացքում (համապատասխանաբար՝ 21% եւ 60%): Սրա հետ մեկտեղ հանդիպում էին դեպքեր, երբ տեղեկացման ժամկետը ձգվել է մի քանիսից մինչեւ 15 օր:

Հարկ է նշել, որ 4 քննիչներ նշել են «մեկ օրվա ընթացքում» տարբերակը:



Հիմնականում կալանավորման մասին տեղեկացնում է քննիչը կամ հաղորդում են ՆԳ բաժնից (կալանավորների եւ հարազատների 42%, փաստաբանների՝ 56%): Ընդ որում՝ անձամբ զանգահարելու հնարավորության մասին նշում են կալանավորների եւ հարազատների 13%-ը, փաստաբանների՝ 20%-ը, քննիչների՝ 9%-ը:

Նախնական կալանքի պահը շատ կարեւոր մի փուլ է: Առանց փաստաբանի եւ դրսից որեւէ օգնության իրավապահ մարմինների աշխատակիցների հետ մարդու դեմ առ դեմ մնալը, ցավոք, ընձեռում է հնարավորություններ չարաշահումների, անօրինական գործողությունների համար, ընդհուպ մինչեւ առանց արձանագրություն կազմելու անօրեն ազատագրվումը, ձերբակալվածի վրա ճնշում գործադրելն ու քննությանն անհրաժեշտ ցուցմունքներ ստանալը: Հետազոտությունն անց է կացվել «ո՞վ եւ ի՞նչ ընթացքում է գործնականում

տեղեկացնում ձերբակալվածի հարազատներին ու բարեկամներին ազատազրկման մասին» հարցերը պարզելու նպատակով: Ինչպես նշվում է ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ «ԵԱՀԿ տարածաշրջանում նախնական կալանքի խնդիրը» հաշվետվության մեջ «կալանավորված անձի իր կալանավորման մասին ուրիշ անձանց տեղյակ պահելու իրավունքը նախագգուշական հավելյալ միջոցներից է, որ ուղղված է նախնական կալանքը չարաշահելու ռիսկը կանխելուն: Այն նպաստում է այնպիսի իրավիճակի ստեղծմանը, երբ քաջ հայտնի է ձերբակալված անձի գտնվելու ճշգրիտ վայրը, եւ երբ կարելի է համարժեքորեն արձագանքել ազատազրկմանը, ցուցաբերել համապատասխան օգնություն: Այս միջոցների նշանակությունը գերազնահատել հնարավոր չէ, հաշվի առնելով այն փաստը, որ տեղի են ունենում կալանավորման դեպքեր առանց հաղորդակցման եւ նամակագրության իրավունքի»: Հարկ է նշել, որ հարցման ենթարկված քննիչներից միայն մեկ հոգի է նշել մինչեւ որպես մեղադրյալ ներգրավվելը, նախնական կալանքի վերցնելուց անմիջապես հետո, այսինքն՝ առաջին 96 ժամերի ընթացքում, տեսակցության թույլտվություն ստանալու հնարավորությունը: Նման փորձի բացակայությունը զրկում է ձերբակալվածին ազատազրկման իրական պատճառների մասին իրենց մտերիմներին հաղորդելու, փաստաբանի ընտրության, պաշտպանության իրականացման հարցերի մասին խորհրդակցելու հնարավորությունից: Սրա հետ մեկտեղ, հարցված քննիչների 41%-ը ասացին, որ տեսակցության մասին խնդրանքներով ավելի հաճախ դիմում են նախնական կալանքի վերցնելուց հետո հենց առաջին 96 ժամվա ընթացքում:

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է նախնական կալանքի ընթացքում տեսակցության հնարավորությունը (հ.13, կետ 9 -«հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, այդ թվում պահպանել նամակագրություն, ունենալ տեսակցություններ, օգտվել հեռախոսակապից, գրականությունից, լրատվական

միջոցներից, ստանալ ծանրոցներ, հանձնուքներ, փաթեթներ» եւ հ.15 - «ձերբակալված անձին կարող է տրամադրվել նվազագույնը մեկ տեսակցություն մինչեւ մեկ ժամ տեսողությամբ»): Մակայն, «ելնելով քննության շահերից կալանավորված եւ ձերբակալված անձանց մոտ հարազատների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ տեսակցությունները կարող են արգելվել այն մարմնի որոշմամբ, որն իրականացնում է քրեական վարույթը»:

Հարցման արդյունքների համաձայն տեսակցության տրամադրման վրա ազդող հիմնական գործոններից քննիչներն անվանում են կատարված հանցագործության ծանրությունը (8 մարդ/ 36%) եւ քննության հետ մեղադրյալի համագործակցությունը (4 մարդ/ 18%): Որպես կանոն, մերժումները նրանք պատճառաբանում են քննության գաղտնիքով (15 մարդ/ 68%) եւ գտնում են, որ տեսակցություն ստանալը պետք է կախված լինի նախաքննության շահերից (10 մարդ/ 45%) եւ կատարած հանցագործության ծանրությունից (4 մարդ/ 18%): Միանշանակ «կողմ են» տեսակցությանը 4 քննիչներ (18%), «դեմ են»՝ 5 (23%): Ճնշող մեծամասնությունը գտնում է, որ տեսակցություն տրամադրելու իրավունքը պետք է ունենա քննիչը (18 մարդ/ 82%):

## Մեկուսարանների տեղադրվածությունը

Անձինք, ում նկատմամբ դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, պահվում են Հայաստանի հանրապետության քննչական մեկուսարաններում: Դրանք ընդամենը 7-ն են՝ 6-ը գտնվում էին ՆԳՆ ենթակայության տակ եւ այժմ փոխանցվել են Արդարադատության նախարարությանը, եւ ԱԱՆ քննչական մեկուսարանը:

4 մեկուսարաններ գտնվում են ճանապարհից հեռու եւ մինչեւ դրանք տրանսպորտ չի հասնում: N1 մեկուսարանին մոտեցող տրանսպորտը կանգ է առնում 500մ, N5՝ 1000 մ, Գյումրիինը՝ մոտ 400 մ հեռավորության վրա: Աբովյանի կանանց մեկուսարանը հասնելու համար պետք է տրանսպորտով գնալ մինչեւ միջքաղաքային ավտոբուսի մոտակա կանգառը եւ խաչմերուկից ոտքով քայլել մոտ 500 մ, ինչը եւ սովորաբար անում են մարդիկ:



## Հանձնուք

### Հանձնուքի ընդունման կետ

Հիմնականում հանձնուքի ընդունման գրեթե բոլոր կետերը չնչին բանով են տարբերվում իրարից: Պրակտիկորեն բոլոր քննչական մեկուսարաններում հանձնուքի ընդունման կետը գտնվում է շինության ներսում: Միայն Աբովյանի մեկուսարանում (կանայք եւ անչափահասներ) հանձնուքն ընդունվում է փողոցում գտնվող պատուհանից, հենց փողոցում տեղադրված են սեղան եւ նստարան, որտեղ կարելի է լրացնել հանձնուքի բլանկը:

Հիմնականում հանձնուքի ընդունման բոլոր կետերում փակցված են բլանկների լրացման ձեւերը եւ թույլատրվող միջոցների ու առարկաների ցուցակները: Սակայն միայն մեկ մեկուսարանում մանրամասնորեն նկարագրված էր հանձնուքի ընդունման կարգը. թեյը, սուրճը պետք է փոխանցվեն պուլի-էթիլային փաթեթներով, կոնֆետներն առանց թղթերի եւ այլն: Ոչ մի ուղղորդում չկար Աբովյանի եւ ԱԱՆ մեկուսարանների հանձնուքի ընդունման կետերում, պատերին, պատուհանների մոտ չկա ոչինչ, ինչը կարող էր հարազատներին տեղեկացնել, ե՞րբ, ի՞նչ եւ ինչպե՞ս կարելի է փոխանցել: Ընդ որում, ԱԱՆ-ում թույլատրված առարկաների ցուցակը գտնվում է հանձնուքն ընդունող աշխատակցի մոտ, այն կարելի է վերցնել եւ ծանոթանալ: Պրակտիկորեն ամենուր, բացի N1 մեկուսարանից, սանհանգույցից օգտվելու անհրաժեշտության դեպքում այցելուները պետք է անցնեին վարչական շենքը: Ոչ մի շինությունում ձեռնարկի ջեռուցում չէր նախատեսված:

Որպես օրինակ նկարագրենք դրանցից մեկը: Մեր այցելության ժամանակ N1 մեկուսարանի հանձնուքի ընդունման կետը մի սենյակ էր (տարածքը մոտավորապես 20 քառ.մ), որտեղ կային երկու սեղան եւ նստարան (երեք մարդու հա-

մար): Փոխանցման համար թույլատրված ապրանքների ցուցակը սկսվում էր հետեւյալ խոսքերով. «Մահապատժի դատապարտված անձանց համար թույլատրվող առարկաներ»: Կար ամռան ընթացքում մրգերի փոխանցումն արգելելու մասին հայտարարություն, ինչը բացատրվում էր սառնարանների բացակայությամբ եւ համաճարակի բռնկման հնարավորությամբ:

Հայտարարությունները փակցված էին անհարմար տեղերում: Ցուցակը կարդալու համար պետք է ընդհուպ մոտենալ պատուհանին, որի մոտ սովորաբար հերթ է լինում: Միեւնույն ժամանակ, տարածքը բավական ընդարձակ է, այդ ցուցակները միանգամայն կարելի է փակցնել այլ անկյունում: Մենյակը բավական անմխիթար վիճակում էր, ուներ վերանորոգման կարիք: Բլանկի օրինակ չկար, հարազատները ցույց տվեցին սովորական մի թուղթ, որի վրա թվարկված են փոխանցվող ապրանքները, ումանք բերել էին նախօրոք գրված ցուցակը:

N1 մեկուսարանի հանձնուքի ընդունման կետը միակն էր, որտեղ կար սանհանգույց<sup>2</sup>:

Հիմնականում հանձնուքը փոխանցվում է շաբաթը մեկ անգամ (69% կալանավորների հարազատներ): Հարազատների մեծ մասը (71%) նշեցին, որ փոխանցման համար նրանք ստիպված են լինում սպասել կես ժամից ոչ ավելի:

Ներկայումս թույլատրվում է մեկ ամսվա ընթացքում 40 կգ-ից ոչ ավելի հանձնուք: Այն կարելի է փոխանցել միանգամից, կամ էլ՝ մաս-մաս: Ոչ բոլոր կետերում է միանշանակ բացատրված այս նրբությունը, սովորաբար դա արվում է բանավոր: Գրեթե ամենուրեք փակցված հայտարարություններում մատնանշվում էր դեղորայք փոխանցելու արգելքը: Ընդ որում, վարչակազմի աշխատակիցները տեղեկացրեցին, որ հարա-

---

<sup>2</sup> N1 մեկուսարանի հանձնուքի ընդունման կետը այս պահի դրությամբ (2002թ. փետրվար) արդեն վերանորոգված է: Տես ծանոթագրությունը:

գատներից ընդունվում են մեկուսարանի բժշկի նշանակած դեղերը, փոխանցումը կատարվում է նրա իմացությամբ եւ համապատասխան հսկողությամբ:

Հանձնուքի հարցում փոփոխություններ են նախատեսվում: Օրենքի նախագծի հոդված 22-ի համաձայն ձերբակալված անձը արգելանքի տակ գտնվելու ողջ ընթացքում կարող է ստանալ մինչեւ 20 կգ հանձնուք (ներկայումս նախնական պահման մեկուսարաններում գտնվող անձանց ընդհանրապես չի թույլատրվում հանձնուք փոխանցել), իսկ կալանավորվածը՝ մեկ ամսվա ընթացքում մինչեւ 70 կգ: Ձերբակալվածների եւ կալանավորվածների անունով ստացվող գումարները փոխանցվում են նրանց անձնական հաշվե համարներին: Ընդ որում, նրանք այդ հաշվից դրամ կարող են փոխանցել բարեկամներին եւ այլ անձանց: «Բժշկի եզրակացությամբ կարիքն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձանց անունով ստացվող դեղորայքի քանակը չի սահմանափակվում: Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին փոխանցել այնպիսի նյութեր, առարկաներ, որոնք մարդկանց առողջությանը վտանգ են սպառնում կամ կարող են խոչընդոտել արգելանքի եւ կալանքի տակ պահելու խնդիրների իրականացմանը»:

## Տեսակցություններ

### Տեսակցության սպասում

Հիմնականում տեսակցության սպասումը (փաստաթղթերի ձեռակերպումը, կալանավորի բերումը) տեւում է մինչեւ մեկ ժամ (այսպէս են պատասխանել տեսակցություն ստացած բոլոր 23 մարդիկ, վարչակազմի խոսքերով՝ փաստաթղթերի ձեռակերպումը տեւում է մինչեւ 20 րոպէ): Որպէս կանոն բոլոր մեկուսարաններում այցելուները ներկայացնում են տեսակցության խնդրանքով դիմումը նույն այն պատուհանից, որտեղից ընդունվում է հանձնուքը եւ սպասում են տեսակցությանը նույն տարածքում: ԱԱՆ մեկուսարանում նույն այն տարածքում, որտեղ գտնվում է հանձնուքն ընդունելու պատուհանը, գտնվում է նաեւ անցագրային բյուրոյի պատուհանը: Այսօրվա դրությամբ երկար սպասելու պահանջ չի լինում, քանի որ մեկուսարանում տեսակցությունները խիստ հազվադեպ երեւոյթ են:

N1 մեկուսարանում տեսակցության թույլտվությունը փոխանցվում է մեկուսարանի աշխատակցին պատուհանում, որից հետո սպասում են դրսում: Աբովյանում այցելուների համար սենյակ առհասարակ չկա: Սպասել պետք է դարձյալ փողոցում:

### Տեսակցության սենյակներ

Ուսումնասիրվող բոլոր մեկուսարաններում կային տեսակցության սենյակներ: Դրանցից երեքում (N1 մեկուսարան, Գորիս, Գյումրի) կային ապակե միջնորմեր, ընդ որում միայն Գորիսում, տեսակցության երկու խցիկներից մեկում կար հեռախոս: Մնացած մեկուսարաններում տեսակցության վարերը սովորական սենյակներ են առանց հատուկ որեւէ սար-

քաղորման: Հիմնականում հնարավոր է միաժամանակ կազմակերպել 1-2 տեսակցություն, միայն N1 մեկուսարանում կան 6 խցիկներ: Եվ կալանավորները, եւ այցելուները նստում են անհարմար աթոռակների եւ նստարանների վրա: Պրակտիկորեն բոլոր մեկուսարաններում սանհանգույցը գտնվում է վարչության շենքում եւ անհրաժեշտության դեպքում պետք է պահակախումբ խնդրել այնտեղ ուղեկցելու համար: Գրեթե ամենուր այս շինություններում չկա բնական լույս, չկան օդափոխիչներ, ջեռուցում: Գործիսում, տեսակցությունների սենյակում կար մարտկոց, վարչության խոսքերով ձմռանն այդ տարածքը ջեռուցվում է: Մեկուսարան մեր այցի ժամանակ (27 հոկտեմբերի) սենյակում տեսակցություն էր ընթանում, կալանավորը խցիկում կանգնած էր: Հարցին «Ինչու՞ չեք նստում», պատասխանեց, որ նստած մըսում է:

Ոչ մի մեկուսարանում փակցված չէր տեսակցության ընթացակարգը: N1 մեկուսարանում փակցված էր այն առարկաների ցուցակը, որոնք չի կարելի ներս տանել մեկուսարան՝ բջջային հեռախոսներ, կտրող-ծակող առարկաներ եւ այլն: ԱԱՆ մեկուսարանում արգելված առարկաների ցուցակը գտնվում էր տեսակցության սենյակներում՝ կապի միջոցներ, ֆոտոապարատ եւ այլն:

Մեկուսարանի աշխատակիցները տեսակցության ընթացքում որպես կանոն չեն կարող նստել, նրանց համար աթոռներ նախատեսված չեն: Պահակախմբի համար «նստելու տեղեր» նախատեսված էին ԱԱՆ մեկուսարանում: Եթե հաշվի առնենք, որ տեսակցությունը միջին հաշվով կարող է տևել մոտ 2 ժամ, ապա հատուկ տեղերի բացակայությունը ստեղծում է ինչպես անհարմարություն, այնպես էլ կարող է դառնալ տեսակցության համար նախատեսված ժամկետը կրճատելու պատճառ: Հարցին «Արդյո՞ք ծանոթացնում են այցելուներին տեսակցության ընթացքի կանոնների հետ» բոլոր աշխատակիցները պատասխանում էին տարբեր կերպ: Բացի այդ

«Որքա՛ն է տեւում տեսակցությունը» հարցի պատասխանները տատանվում էին 1 ժամից մինչեւ 4 ժամը: Չնայած, որ հարցվողներին չենք տվել վերը բերված հարցը, կան դեպքեր, երբ տեսակցություն ստացած մարդիկ նշել են՝ «Ուղեկցողն ասաց՝ բավական է», «Աթոռակները շատ անհարմար էին, կանգնած էինք զրուցում»:

Չնայած N1 մեկուսարանի տեսակցությունների սենյակը նախատեսված է միաժամանակ 6 տեսակցությունների համար, սակայն այցելուների տեղերը բաժանված չեն միջնորմերով (դրանք նախատեսված եղել են, բայց ներկայումս չկան): Այն կալանավորները, որ տեսակցություն են ստացել գոնե մեղադրական եզրակացությունը ներկայացնելուց հետո, նշում էին, որ տեսակցության ընթացքում ստիպված էին կանգնած մնալ, քանի որ աթոռակները շատ անհարմար են (ամրացված են կողքի պատին, բարձր են): Սենյակը «խուլ է», արհեստական լուսավորմամբ, առանց պատուհանների ու օդանցքերի: Նույն տարածքում միաժամանակ ընթանում են «տնտեսական մասից» կալանավորների տեսակցությունները, սակայն նրանց համար նախատեսված տեղը տալիս է անմիջական շփման հնարավորություն (սենյակի անկյունում կան սեղան եւ նստարան):

N2 մեկուսարանում (ք. Գյումրի) հնարավոր է կազմակերպել միաժամանակ 3 տեսակցություններ, կալանավորների եւ այցելուների միջեւ կա միջնորմ, բայց երկու կալանավորի/ երկու տարբեր այցելուի միջեւ՝ ոչ: Դա ըստ էության հնարավոր էլ չէ, քանի որ տարածքը նեղ է, ունի մեկ մուտք: Լուսավորումը մեկ լամպ է՝ կալանավորի կողմից: Սանհանգույցը մոտ է, բայց այնտեղ կարելի է գնալ միայն պահակախմբի ուղեկցությամբ:

N3 մեկուսարանում (ք. Վանաձոր) տեսակցության համար նախատեսված տարածքը ցանցից պատրաստված երկու վանդակներ են, որ տեղադրված են միջանցքի վերջում, հակադիր պատերի մոտ: Նրանց միջեւ հեռավորությունը 0,8մ է: Մի

վանդակում մեկ աթոռակ է կալանավորի համար, մյուսում կա մեկ նստարան, որի վրա կարող են տեղավորվել երեք մարդ: Վանդակը բավական նեղ է:

Գորիսի մեկուսարանը գտնվում է բանտի շենքում: Տեսակցության համար կան երկու խցիկներ, որ գտնվում են բավական մեծ սենյակում: Խցիկներից մեկում կա հեռախոս: Ըստ ամենայնի, երկրորդ խցիկն օգտագործվում է բավական հազվադեպ, տեսակցություններ չլինելու պատճառով:

N5 մեկուսարանը (ք. Երեւան) նախատեսված է վարչական նախկին աշխատակիցների համար: Տեսակցությունների համար վայրը սովորական «խուլ» սենյակ է, արհեստական լուսավորմամբ, առանց օդանցքերի: Կան մեկ նստարան, սեղան եւ երկու աթոռներ: Կալանավորին ուղեկցողը տեսակցության ընթացքում գտնվում է դռան ետեւում:

Կանանց եւ անչափահասների մեկուսարանը (ք. Աբովյան) գտնվում է գաղութի տարածքում եւ ընդհանուր հիմնարկ է: Քննության տակ գտնվողների/ամբաստանյալների եւ արդեն դատապարտվածների տեսակցությունների համար առանձին տարածքներ չկան: Ընդամենը կան 4 սենյակներ, որոնք վերանորոգման կարիք ունեն, կահույքը՝ աթոռներ են եւ կիսաջարդ բազկաթոռներ, ջեռուցում նախատեսված չէ, երկու սենյակներում վարդակներ չկային: Դա նշանակում է, որ այդ սենյակները հնարավոր չէ տաքացնել նույնիսկ էլեկտրական սարքերով: Պատուհանները ներկված են եւ չեն բացվում, բայց փողոցից լսվում է սենյակում ընթացող զրույցը:

ԱԱՆ մեկուսարանը (ք. Երեւան) չունի հատուկ սարքավորումներով տեսակցությունների տարածք: Այն սովորական մի սենյակ է, որտեղ կան բազմոց (կալանավորը եւ այցելուն նստում են կողք-կողքի), երկու աթոռներ եւ լվացարան: Մեկուսարանի աշխատակիցը նստում է նույն սենյակում, սեղանի մոտ: Տեսակցությունների համար սենյակների ուսումնասիրությունները հաստատվում են նաեւ կալանավորների եւ

նրանց բարեկամների հարցումներով. 16 դեպքերում (44%) տեսակցություններն ընթացել են սովորական սենյակներում, 12 (33%)-ում՝ ապակե միջնորմերով սենյակներում, 3 (8%)՝ ապակե միջնորմով եւ հեռախոսով, միշտ վերահսկողի ներկայությամբ, միայն երկու դեպքում նույն տարածքում ընթանալիս են եղել ուրիշ տեսակցություններ:

### **Մինչև 5 տարեկան երեխաների հետ տեսակցություն**

Մեկուսարանի կալանավորներին թույլատրվում է տեսակցություն մինչև 5 տարեկան երեխաների հետ: Տեսակցությունները թույլատրվել են ՆԳ նախարարի կարգադրությամբ: Դրանք ընթանում են անմիջական շփման միջոցով: Հիմնականում երեխաների համար տեսակցության հատուկ սենյակներ չկան: Բացառություն են կազմում N 1 եւ Վանաձորի մեկուսարանները: Միայն N 1 մեկուսարանում է սենյակը հատուկ կահավորված՝ բազմոց եւ բազկաթոռներ, խաղալիքներ, նկարներ:

N 2 մեկուսարանում մինչև 5 տարեկան երեխաների հետ տեսակցություններն ընթանում են երկու սենյակներից մեկում, որ նախատեսված է փաստաբանների եւ քննիչների տեսակցությունների համար: Գործում դրանք ընթանում են այն նույն սենյակում, որտեղ տեղադրված են խցիկները, բայց կալանավորները եւ այցելուները նստում են պատի մոտի նստարաններին:

Աբովյանի N5 եւ ԱԱՆ մեկուսարաններում նույնպես չկան առանձին տարածքներ երեխաների հետ տեսակցությունների համար, դրանք ընթանում են այնտեղ, որտեղ տեղի են ունենում սովորական տեսակցությունները:



## Տեսակցությունների իրական լինելը

ՀՀ-ում տեսակցությունների հարցը կանոնակարգվում է 1969թ. «Հայկական ԽՍՀ-ում նախնական կալանքի վերցնելու կանոնադրությունում» (այսուհետ՝ Կանոնադրություն ...), որտեղ նշվում է , որ տեսակցության եւ նամակագրության թույլտվություն կարող է տալ քրեական գործը վարող մարմինը: Սակայն չեն կարգավորվում կոնկրետ դեպքերը:

Հոդված 12. «Կալանքի վերցված անձանց տեսակցություններ թույլ տալու կարգը»

«Կալանքի վերցված անձանց իրենց ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցություններ կարող է թույլ տալ նախնական կալանքի վայրի վարչակազմը միայն այն անձի կամ մարմնի թույլտվությամբ, որի վարույթում գտնվում է տվյալ գործը: Տեսակցության տեւողությունը սահմանվում է մեկից մինչեւ երկու ժամ: Անձը կամ մարմինը, որի վարույթում գտնվում է գործը, կարող է տեսակցություն թույլ տալ, որպես կանոն, ամսական ոչ ավելի քան մեկ անգամ»:

«Հայկական ԽՍՀ-ում նախնական կալանքի վերցնելու կանոնադրության» մեկնաբանությունների համաձայն<sup>3</sup> «կալանքի վերցված անձանց բարեկամների եւ այլ անձանց հետ տեսակցություններն ընթանում են մեկուսարանի աշխատակիցների ներկայությամբ: Տեսակցության ժամանակ արգելվում է զրուցել պայմանական լեզվով, օտար, աշխատակցին անձանոթ լեզվով: Տեսակցության ժամանակ արգելվում է փոխանցել միմյանց ինչ-որ գրառումներ, փաստաթղթեր, այլ առարկաներ: Կարգը խախտելու դեպքում տեսակցությունն ընդհատվում է»:

---

<sup>3</sup> Տրամադրվել են Քրեական պատիժների իրականացման վարչության կողմից

Քրեական պատիժների իրականացման վարչության կողմից տրամադրած տվյալների համաձայն մոնիտորինգի անցկացման պահին ձեւավորվում էր հետեւյալ պատկերը.

N1 մեկուսարան (Երեւան) – պահվում է մոտավորապես 700 մարդ: Օգոստոսին տրամադրվել է 7 տեսակցություն, դրանցից 5-ը դատավարության ընթացքում, 2-ը՝ նախաքննության փուլում: Սեպտեմբերին եղել է 9 տեսակցություն, բոլորը դատարանում:

N2 մեկուսարան (Գյումրի) – պահվում է մոտավորապես 30 մարդ, վերջին երեք ամիսների ընթացքում տեսակցություններ չեն եղել, մեկը՝ մինչեւ 5 տարեկան երեխայի հետ:

N3 մեկուսարան (Վանաձոր) – պահվում է մոտավորապես 110 մարդ, վարչության աշխատակիցների խոսքերով տարվա ընթացքում տեղի է ունենում 3-4 տեսակցություն:

Գորիսի քննչական մեկուսարան – մոտ 30 մարդ, որոնց նկատմամբ դատավճիռը ուժի մեջ չէր մտել, մեկ ամսվա ընթացքում ընթանում է 1-2 տեսակցություն, ներառյալ դատապարտյալների տեսակցությունները:

N5 մեկուսարան (Երեւան, վարչական մարմինների աշխատակիցներ ) – պահվում է մոտ 40 կալանավոր, 1.01.2001 – 24.09.2001թթ. ընթացքում տրամադրվել է 5 տեսակցություն:


Աբովյանի մեկուսարան (կանայք եւ անչափահասներ) – մոտ 60 կալանավոր, երեք ամիսների ընթացքում թույլատրվել է 3 տեսակցություն (երկուսը քննության ընթացքում, մեկը՝ դատարանում):

ԱԱՆ մեկուսարան (Երեւան) – պահվում է 23 կալանավոր, 2001 թ. օգոստոս-սեպտեմբերի ընթացքում եղել է 12 տեսակցություն:

Իսկ հարցումը ցույց տվեց հետեւյալը.


Քննիչների գրեթե կեսը (45%) նշել են, որ տեսակցություն ստանալու խնդրանքով նրանց դիմում են բավական հազվադեպ: Այն դեպքերը, երբ դիմում են, դա տեղի է ունենում կամ առաջին 96 ժամվա ընթացքում, կամ որպես մեղադրյալ ներգրավելուց հետո:

Կալանավորների եւ նրանց բարեկամների հարցումներից պարզվեց, որ 40%-ն ընդհանրապես որեւէ քայլ չեն ձեռնարկել տեսակցության թույլտվություն ստանալու համար, բացատրելով դա իբր գոյություն ունեցող օրենքով, որն արգելում է տեսակցությունները մինչեւ դատավճիռ կայացնելը (36%) եւ այն բանով, որ թույլտվություն ստանալու հույս չկա (30%):




«Որտեղի՞ց գիտեն այդ մասին» հարցին ի պատասխան մատնանշվում է մեկուսարանի վարչակազմը, քննիչը, վկայակոչվում է մյուս կալանավորների փորձը:

Տեսակցության թույլտվության համար չդիմելը բացատրելիս նույն գործոններն են մատնանշում նաեւ փաստաբանները. տարբերությունն այն է, որ առաջին տեղում դնում են տեսակցությունը ստանալու հույսի բացակայությունը (48%), երկրորդ տեղում՝ օրենքի չիմացությունը (20%):




Տեսակցության համաձայնությունը տրվում է խիստ հազվադեպ (քննիչների 82%, փաստաբանների 84%), ինչը համընկնում է կալանավորների հարցման արդյունքների հետ: Դրանց համաձայն՝ եղել են դիմումի 99 փորձեր (50 մարդ), որոնցից 36-ը պսակվել են հաջողությամբ, ընդ որում՝ 22-ը դատավճռի կայացումից հետո: Այլ խոսքերով՝ մինչև դատավճռի կայացումը 83 մարդու պարագայում տեղի է ունեցել 14 տեսակցություն:



Քննիչները նշում են, որ տեսակցության թույլտվությունը ավելի հաճախ տրվում է որպես մեղադրյալ պատասխանատվության կանչելուց (8 քննիչ/ 36%) եւ մեղադրական եզրակացության հաստատումից հետո (5 քննիչ/ 23%): Հետաքրքիր է նշել, որ 4 քննիչներ պատասխանել են, թե տեսակցությունները չեն թույլատրվում ընդհանրապես, թեեւ հարցաթերթիկի հիմնական տարբերակներում նման պատասխան չկա:

Որպես կանոն տեսակցության թույլտվության համար դիմում են անմիջապես քննիչներին (փաստաբանի ծառայությանը դիմել են ընդամենը 9 անգամ, ինչը բոլոր դեպքերի 9% է կազմում): Քննիչների մերժումները փորձել են բողոքարկել միայն առանձին դեպքերում, ինչն ապացուցվում է փաստաբանների պատասխաններով (21 մարդ/ 84%): Ընդ որում՝ միայն 4 հոգի նշել են, թե լինում են հաջող բողոքարկման դեպքեր: Կալանավորների խոսքերով քննիչներն իրենց մերժումները հիմնավորում են «տեսակցությունները չեն նախատեսված օրենքով» խոսքերով (39 դեպք / 62% մերժումների ընդհանուր քանակից):



Հետաքրքիր է, որ փաստաբանների տվյալներով քննիչները մերժումները հիմնավորում են՝ քննության գաղտնիությամբ (փաստաբանների 76%), «իրավասու չեմ» (փաստաբանների 20%): Այս ամենը նշանակում է, որ քննիչներն օգտվում են հասարակ քաղաքացիների օրենքի չիմացությունից:


Պետք է նկատել, որ տեսակցության համար դիմումների 27%-ի դեպքում (կալանավորների հարցման արդյունքներ) առաջարկվել է ինչ-ինչ պայմանների ընդունում տեսակցության թույլտվություն ստանալու դիմաց: Փաստաբանների կարծիքով տեսակցություն ստանալը հիմնականում կախված է այն բանից, համագործակցում է, արդյոք, մեղադրյալը քննության հետ (9 մարդ / 36%) եւ հանցանքի ծանրությունից (8 մարդ / 32%):

Տեսակցության թույլտվությունը ստանալուց մինչեւ այն տրամադրելը անցնում է մեկ շաբաթ: Սա ապացուցվում է նաեւ փաստաբանների պատասխաններով:

Տեսակցությունները հիմնականում տրամադրվել են դատավճիռը կայացնելուց հետո: Մեկուսարանների վարչակազմերի ներկայացրած տեղեկությունների համաձայն այն հազվադեպ տեսակցությունները, որ տրամադրվում են կալանավորներին մեկուսարաններում, հաճախ տեղի են ունենում դատաքննության ընթացքում դատավորների թույլտվությամբ:

Ամբաստանյալների համար տեսակցությունների խնդրանքի մասին հարցին 13 դատավորներ (65%) նշել են, որ նման դեպքերը հազվադեպ են: 12 մարդ (60%) պատասխանել են, որ նրանք միշտ տրամադրում են տեսակցություն, իսկ 8 (40%)-ը՝ ավելի շուտ բավարարում են նման խնդրանքները: Իմիջիայլոց բոլոր դատավորները նշել են, թե հարցը լուծվում է երեք օրվա ընթացքում: Դատավորների մերժումները հաճախ պատճառաբանվում են դատաքննության շահերով: Դատավորների

մեծ մասը՝ 14 (70%), տեսակցության տրամադրումը չեն կապում որեւէ պայմանի հետ (հանցանքի ծանրությունն եւ այլն):



### **Հեռանկարները**

«Ձերբակալված եւ կալանված անձանց պահելու մասին» օրենքի նախագծի համաձայն արմատապես փոխվում է տեսակցությունների տրամադրման եւ նամակագրության իրավունքի պահպանման կարգը:

Տեսակցության իրավունքը կանոնակարգվում է օրենքի նախագծի հոդված 15-ով՝ «Պաշտպանի, մերձավոր ազգականների եւ այլ անձանց հետ տեսակցելը»:

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ բանտարկյալներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Քննության շահերից ելնելով ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին» :


Ձերբակալված եւ կալանավորված անձանց մերձավոր հարազատների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ տեսակցությունը տրամադրվում է ձերբակալվածների կամ կալանավորվածների գտնվելու վայրի վարչակազմի աշխատակիցների հսկողության տակ:

Այդ անձանց կողմից ձերբակալվածներին կամ կալանավորվածներին քրեական գործի արդար քննությանը խոչընդոտող (կամ նոր հանցագործությանը նպաստող) արգելված առարկաներ, նյութեր եւ տեղեկություններ փոխանցելը (կամ դրա փորձերը) կարող է հանգեցնել տեսակցությունը ժամանակից շուտ դադարեցնելուն:


Մերձավոր հարազատների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ ձերբակալված անձին կարող է տրամադրվել նվազագույնը մինչեւ մեկ ժամ տեւողությամբ մեկ տեսակցություն, իսկ կալանավորված անձին՝ մեկ ամսվա ընթացքում նվազագույնը երկու տեսակցություն մինչեւ երեք ժամ տեւողությամբ»:

Քննիչները գտնում են, որ տեսակցություն ստանալը պետք է կախված լինի քննության շահերից (10 մարդ /45%) եւ կատարած հանցագործության ծանրությունից: Տեսակցությանը միանշանակ կողմ են 4 քննիչներ (18%), դեմ են՝ 5 (23%): Ճնշող մեծամասնությունը գտնում է, որ տեսակցություն տրամադրելու իրավունքը պետք է ունենա քննիչը (18 մարդ / 82%):





Հարցումների ընթացքում փաստաբանները 21(84%) նշել են, որ քննության տակ գտնվողը պետք է ունենա տեսակցության իրավունք: Այդ թվում՝ 17 հոգի (68%) կարծում են, որ տեսակցություններ տրամադրելու իրավունքը պետք է ունենա քննիչը, 3-ը (12%)՝ մեկուսարանի վարչակազմը, եւ ընդամենը 5 հոգու (20%) կարծիքով տեսակցությունները պետք է թույլատրվեն սկզբունքորեն:



Դատաքննության ընթացքում կալանավորների իրենց հարազատների/ընկերների հետ տեսակցության կողմ են արտահայտվել 14 դատավորներ (70%), դեմ` 2 (10%): Դատավորների մեծ մասը գտնում է, որ ամբաստանյալին տեսակցություն տրամադրելու իրավունքը պետք է ունենա դատավորը (17 մարդ, 85%):

## Նամակագրություն

Նամակագրության իրավունքը կանոնակարգվում է «Կանոնադրության...» 13 հոդվածով. «Կալանքի վերցված անձինք կարող են ազգականների կամ այլ քաղաքացիների հետ նամակագրություն ունենալ այն անձի կամ մարմնի թույլտվությամբ, որի վարույթում գտնվում է գործը»:

Կալանքի վերցված անձանց գանգատները, դիմումներն ու նամակները ստուգվում են նախնական կալանքի վայրի վարչակազմի կողմից: Դատախազին հասցեագրված գանգատները, դիմումներն ու նամակները ստուգման ենթակա չեն եւ հասցեատիրոջն են ուղարկվում դրանք հանձնելու պահից մեկ օրվա ընթացքում» :


Վերը բերված մեկնաբանությունների համաձայն՝ «կալանքի վերցված անձանց բոլոր նամակները ենթակա են նախնական կալանքի վայրերի վարչակազմի գրաքննությանը: Չեն կարող ուղարկվել նամակները, որ գրված են ծածկագրերով, ծածկագրային կամ այլ պայմանական նշաններով, ինչպես նաեւ նամակները, որտեղ կա տեղանքի գծապատկերը, քարտեզը, մանրանկարը»:

Քննչական մեկուսարանի բոլոր աշխատակիցների բանավոր հայտարարությունների համաձայն վերջին մի քանի տարիների ընթացքում չի եղել մեկուսարանում պահվող կալանավորների անձնական նամակագրության որեւէ դեպք: Համապատասխանաբար՝ չկա նաեւ նամակագրությունը եւ գրաքննությունն ապահովող հատուկ ծառայություն:

Հարցվողների պատասխանների արդյունքերով նամակագրության թույլտվություն ստացել է ընդամենը 13 մարդ (16%): Դրանցից 7-ը դատաքննության փուլում, 5-ը (6%)՝ նախաքննության ընթացքում եւ դրանից հետո (երեքը թույլտվություն են ստացել նախորդ մերժումը բողոքարկելուց հետո): Հետա-

քրքիր է, որ նման պատասխանները չեն համընկնում վարչության աշխատակիցների պնդումների հետ, թե մեկուսարաններում անձնական նամակագրություն գոյություն չունի: Պետք է նշել, որ թույլտվություն ստացած բոլոր կալանավորները կազմում էին բավական ակտիվորեն իրենց իրավունքները պաշտպանողների մի խումբ: Այնպես որ այս դեպքերը ամենեւին էլ օրինաչափ չեն: Հնարավոր է տվյալ հարցը ստանում էր ոչ պաշտոնական լուծում:


Հարցման ընթացքում հայտնաբերվեց մի դեպք. փաստաբաններից մեկը պատմեց, թե ինչպես կալանավորի մորից չեն ընդունել հանձնուքը, հայտարարելով, թե նրա որդին պատժված է եւ որոշ ժամանակով զրկվել է հանձնուք ստանալու իրավունքից. նրան տեսել են մորը նամակ գրելիս, որը հույս ուներ փոխանցել փաստաբանի կամ այլ կալանավորների միջոցով:



Նշվել է նաեւ մի դեպք, երբ նամակագրությունը կալանավորին թույլ են տվել, բայց նամակները հասցեատիրոջը չեն հասել: 16 փաստաբաններ (64%) նույնպես հայտարարում են, որ նամակագրության մասին խնդրանքով դիմում են բավական հազվադեպ, եղած դիմումներն էլ ավելի հաճախ չեն բավարարվում (15 մարդ /60%): Ընդ որում՝ մի փաստաբան նույ-

նիսկ գտնում է, թե նամակագրությունը օրենքով չի թույլատրվում: Նույն կերպ, ինչ-որ տեսակցության դեպքերում, մերժումները հիմնավորվում են օրենքով թույլատրված չլինելով եւ քննության գաղտնիությամբ: Հարցված փաստաբաններից 18-ը (72%) նշում են, որ մերժումների բողոքարկման դեպքերը շատ քիչ են եւ ընդամենը մեկ փաստաբան հայտարարեց, թե լինում են նամակագրության մերժումների հաջող բողոքարկման դեպքեր:

Նամակագրության թույլտվության համար դիմումների մասին հարցին ի պատասխան քննիչները նշում են, որ դրանք շատ քիչ են լինում (18 մարդ/ 82%), դրանք պրակտիկորեն չեն բավարարվում (14 մարդ/ 64%): Քննիչների մերժումները, որ պատճառաբանվում են քննության շահերով (10 մարդ/45%) եւ օրենքով թույլատրված չլինելով (4 մարդ/ 18%), համարյա երբեք չեն բողոքարկվում:




Դատավարության ընթացքում ամբաստանյալին նամակագրության իրավունք տալու մասին խնդրանքներ հանդիպում են շատ հազվադեպ (19 դատավոր / 95%), ընդ որում՝ միայն

մեկ դատավոր պնդում է, որ նման խնդրանքները պրակտիկորեն չեն բավարարվում:

**Հեռանկարները**


Փաստաբանների մեծ մասը (17 մարդ/ 68%) գտնում է, որ քննության տակ գտնվող անձը պետք է ունենա նամակագրության իրավունք: Ընդ որում՝ թույլտվությունը պետք է տա քննիչը (10 մարդ / 40%), մեկուսարանի վարչակազմը (6 մարդ/ 24%), դատարանը (2 մարդ/ 8%) եւ նամակագրությունը պետք է թույլատրվի սկզբունքորեն (8 մարդ/ 31%):

Նամակագրության իրավունքին միանշանակ կողմ են արտահայտվել ընդամենը 3 քննիչներ (14%), միանշանակ դեմ՝ 9 (41%): 7-ական մարդ (32%) նամակագրության իրավունքը կապում են հանցանքի ծանրության եւ քննության շահերի հետ: Մեծամասնությունը գտնում է, որ նամակագրության թույլատրումը պետք է լինի քննիչի իրավասությունը (16մարդ / 73%): Նամակագրության նկատմամբ գրաքննության կողմ են արտահայտվել 15 քննիչներ (68%): Նրանցից 8 հոգի (36%) համարում են, որ այդ հարցը պետք է թողնել քննիչի հայեցողությանը:



Հարցված դատավորների մեծ մասը 12 (60%) գտնում է, որ ամբաստանյալը պետք է ունենա անձնական նամակագրության իրավունք, մեկ դատավորը դեմ է:

Նամակագրության թույլտվության մասին դատավորների կարծիքները բաժանվել են հետևյալ կերպ. պետք է թույլատրի դատավորը (8 մարդ/ 40%), մեկուսարանի վարչակազմը (5 մարդ/ 25%), եւ նամակագրությունն ընդհանրապես պետք է թույլատրվի (4 մարդ/ 20%): Նամակագրության գրաքննությանը միանշանակ դեմ է 5 մարդ (25%), կողմ` 4 (20%): Դատարանի թույլտվության կողմ են 5 մարդ (25%):



«Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի նախագծի ընդունումից հետո նամակագրությունը կկանոնակարգվի հոդված 17 –ով` «Ձերբակալված եւ կալանավորված անձանց կապն ընտանիքի եւ արտաքին աշխարհի հետ».

«Ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը ստեղծում են համապատասխան պայմաններ ձերբակալված եւ կալանավորված անձանց կապն ընտանիքի եւ արտաքին աշխարհի հետ ապահովելու համար: Այդ նպատակով ստեղծվում են տեսակցու-

թյունների սենյակներ, կապի հնարավոր միջոցներ, հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ: Ձերբակալված եւ կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման:

Նամակագրությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով եւ, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման արգելված առարկաների կամ նյութերի փոխադրումը բացառելու նպատակով: Նամակագրության գրաքննությունը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է հիմնարկի վարչակազմը կամ, անհրաժեշտության դեպքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի անունով տեղափոխման պատճառով նրա բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր»:

Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության հոդված 20-ը երաշխավորում է հաղորդագրության անձեռնմխելիությունը. «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ»:



## Եզրակացություններ եւ առաջարկություններ

Մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ օրենսդրորեն կարգավորված չէ եւ պրակտիկորեն տեղի չի ունենում կալանքի վերցված անձի այդ մասին ընտանիքին կամ ընկերներին անձամբ տեղեկացումը, ինչպես կալանավորելուց հետո, այնպես էլ քննության, դատաքննության ընթացքում տեսակցության տրամադրումը: Նման պատկերը խորհրդային օրենսդրության եւ այն ժամանակ կիրառվող պրակտիկայի ժառանգությունն է: Միաժամանակ ակնհայտ է միջազգային նորմերի եւ առաջարկությունների խախտումը:

Կալավայրերից դուրս գտնվող անձանց հետ կոնտակտներ պահպանելու իրավունքը միանշանակ ձեւակերպված է միջազգային մի քանի ստանդարտներում: Մոսկովյան խորհրդի փաստաթղթում, Պաշտպանության կանոնների ժողովածուում առկա է պահանջը, որ ցանկացած ձերբակալված կամ կալանավորված անձ պետք է հնարավորություն ունենա (բացառությամբ «օրինական ձգձգումների» դեպքերի) տեղեկացնելու համապատասխան անձանց իրենց բանտարկության, ձերբակալության եւ գտնվելու վայրի մասին:

Ձերբակալության մասին տեղեկացման պահանջի իրագործման ամենահաճախ միջոցը ձերբակալված անձին հեռախոսով զանգելու թույլտվությունն է: Անվտանգության, քրեական հետաքննության, պրակտիկ հարցերի տեսանկյունից կարող է արդարացված լինել ձերբակալումն իրականացրած մարմինների կապի միջոցներով, թեեւ դա ընդունելի է միայն բացառիկ դեպքերում (տես՝ ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ հաշվետվությունը «Նախնական կալանավորման խնդիրը ԵԱՀԿ տարածաշրջանում»): Մույն հարցի ավելի կոնկրետ կարգավորման համար անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել ՀՀ գործող Քրեական դատավարության օրենսգրքում: Մինչ այդ ձերբակալությունն

իրականացրած մարմինը միանգամայն իրավունք կունենա հղումներ անելու օրենսդրությանը:

Հիմնականում հանձնուքի հարցերում առանձնահատուկ խնդիրներ չեն հայտնաբերվել: Կալանավորներն ու նրանց հարազատները նշում էին, թե կուզենային փոխանցել/ստանալ մթերքներ, որ կարելի է պատրաստել խուցերում, քանի որ հանձնուք ստանալը հնարավոր է շաբաթը մեկ անգամից ոչ հաճախ, իսկ մեկուսարաններում պատրաստվող ուտելիքը նրանց հարմար չէ: Վարչակազմը հաղորդեց, որ խուցերում ուտելիք պատրաստելն արգելվում է, թեև կալանավորներից մի քանիսը նշում էին, որ իրականում խուցերում կան սալօջախներ եւ նրանք պատրաստում են ինքնուրույն:

Չնայած այն բանին, որ բարեկամները ստիպված չեն երկար սպասել հանձնուքը փոխանցելու համար, այնուամենայնիվ դրա համար անհրաժեշտ է լրացնել հատուկ բլանկ, եւ նորմալ աթոռների բացակայության պարագայում դա անելը բավական անհարմար է: Բացի այդ կանանց եւ անչափահասների մեկուսարանում միանգամայն կարելի է ստեղծել հանձնուքի ընդունման սենյակներ: Չնայած վերանորոգման համար անհրաժեշտ են միջոցներ, այն մեծ ծախսերի հետ կապված չի լինի. հանձնուքի ընդունման պատուհանին կից գտնվում է տեսակցությունների համար սենյակներից մեկը, որի արտաքին պատը դուրս է գալիս հենց այն տեղը, որտեղ բարեկամները ստիպված են լինում սպասել փողոցում: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ գաղութի պետի խոսքերով՝ մոտ ժամանակներս այդ տարածքում վերանորոգում է լինելու, կարելի է մտածել այս հարցի մասին եւ մոտենալ դրան ռացիոնալ կերպով: Կարգի բերել ոչ միայն տեսակցության համար տարածքները, այլեւ տանիքի տակ առնել այն վայրը, որտեղ մարդիկ կարող են սպասել հանձնուքը փոխանցելու իրենց հերթին եւ տեսակցությանը: Ծայրահեղ դեպքում՝ փողոցում դրված սեղանի եւ նստարանի վրա ծածկ կառուցել:

Հանձնուքի բոլոր կետերում անհրաժեշտ է պատրաստել եւ փակցնել միօրինակ հիշեցում-հայտարարություններ՝

1. փոխանցելու համար թույլատրված եւ արգելված մթերքների եւ առարկաների մասին,
2. հանձնուքի ընդունման կարգի մասին,
3. դեղորայքի փոխանցման կարգի մասին,
4. կալանավորների իրավունքների մասին,
5. նամակագրության եւ տեսակցության իրավունքի օրենսդրորեն կանոնակարգման, դրանց թույլտվությունը ստանալու համար դիմումների կարգի մասին,
6. բլանկների լրացման օրինակներ:

Գուցե իմաստ ունի հարազատներին տալ բլանկները նախօրոք լրացնելու հնարավորություն:

Չնայած հրահանգում եղած ստանդարտներին, տեսակցության համար տարածքները տարբեր տեսք ունեն: Մի շարք դեպքերում տեսակցության ընթացքում թույլատրվում են անմիջական շփումները, մյուսներում՝ ոչ: Չի բացառվում, որ ներկայիս օրենքի գործելու պարագայում հարցի նման անկարգավորվածությունը կարող է քննիչի տեսակցությունը մերժելու պատճառ դառնալ: Անհրաժեշտ է մշակել բոլոր մեկուսարաններում տեսակցության համար տարածքները սարքավորումներով հագեցնելու միասնական ստանդարտներ: Հարցը հատկապես սուր է Վանաձորի մեկուսարանում, որտեղ չկա տեսակցության համար քիչ թե շատ պիտանի տարածք: Մակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված մեկուսարանը ստացել է նոր շենք եւ նախապատրաստվում է դրա վերանորոգմանը, պետք է նախատեսել ինչպես տարածք տեսակցությունների համար, այնպես էլ՝ հանձնուքի ընդունման նորմալ սենյակ:

Տեսակցության համար սենյակների կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել նրանց տարողունակության հանգամանքը: Այսպես, Վանաձորի մեկուսարանում պահվում է միջին հաշվով 100-120 մարդ: Օրենքի նախագծով նախատեսվում է ամիսը 1-2 տեսակցություն մինե 3 ժամ տևողությամբ: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեսակցության մեկ խցում կարող է ընթանալ 3-4 տեսակցություն (այն էլ, եթե մարդիկ չօգտվեն բոլոր երեք ժամերն օգտագործելու իրենց իրավունքից): Ամենամոտ հաշվարկներով 100 կալանավորների համար կպահանջվի ամենաքիչը 3-4 խուց (սակայն եթե մարդիկ գան միաժամանակ, ստիպված կլինեն սպասել տեսակցությանը 2-3 ժամ): Այդ պատճառով, լավ կլիներ ունենալ պահուստային խցեր, եւ ոչ թե բավարարվել նվազագույնով: Խնդիրներ կարող են առաջանալ Երեւանի ամեանամեծ մեկուսարանում, որտեղ պահվում է մոտ 700 մարդ եւ, որն ունի տեսակցության համար ընդամենը 6 խուց:

Բնական է, որ սույն հարցերի լուծման (տեսակցության եւ հանձնուքի համար տարածքների վերանորոգման, տեսակցության համար հարմար եւ բավարար քանակի տարածքների ստեղծման, անհրաժեշտ սարքավորումների տեղադրման) համար անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական միջոցներ: Հետեւաբար, ուզում ենք հրավիրել տարբեր հասարակական եւ միջազգային կազմակերպությունների ուշադրությունը Արդարադատության նախախարությանը ֆինանսական օգնություն ցուցաբերելու եւ վերը նշված խնդիրները լուծելու համար:

Օրենքում կամ ենթաօրենսդրական ակտում պետք է կոնկրետ կարգավորված լինի տեսակցությունների ընթացակարգը: Հնարավոր է ոչ բոլոր դեպքերում կա տեսակցությունը միջնորմի, կամ հեռախոսի առկայությամբ տրամադրելու անհրաժեշտությունը, այլ այն կարելի է թույլատրել անմիջական շփման միջոցով: Մակայն որոշ դեպքերում, երբ կա քննության

գաղտնիության տարածման մտավախություն, տեսակցությունը կարող է ընթանալ հենց վերահսկվող հեռախոսային կապով եւ դադարեցվել անհրաժեշտության դեպքում:

Կալանավորների եւ նրանց հարազատների հարցումներից երեւում է, որ դիմումների քչությունը գալիս է օրենքի չիմացությունից, տեսակցության մասին խնդրանքով քննիչին կամ դատավորին դիմելու հնարավորության մասին անտեղյակությունից: Գաղութներում ազատագրկվածները միանշանակ պատասխանում էին՝ «թույլ չի տրվում», իսկ նրանք, ովքեր արդեն ազատության մեջ էին եւ քննության, դատի ընթացքում ունեցել են փաստաբաններ, տեղյակ էին իրենց այդ իրավունքից եւ փորձել են դրանից օգտվել: Պատասխանելով մեր հարցերին հարազատներից ոմանք փորձում էին ապացուցել, որ մինչեւ դատավճռի ուժի մեջ մտնելը տեսակցության կամ նամակագրության մասին խոսք լինել չի կարող, քանի որ «այդպիսին է օրենքը»: Սա ցույց է տալիս, որ նախեւառաջ պետք է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի մարդիկ իմանան իրենց իրավունքները եւ պաշտպանեն դրանք: Մինչեւ նոր օրենքի ընդունումը կալանավորների բարեկամներին ամենուրեք պետք է բացատրել, որ նրանք ունեն տեսակցություն պահանջելու իրավունք եւ, որ քննիչի կամ դատավորի մերժումները պետք է հիմնավոր լինեն: Օրենքի ընդունումից հետո հասկապես կսրվի դրա կյանք մտցնելու, նման օրենքի առկայության մասին մարդկանց տեղեկացնելու հարցը:

Մտավախություն է առաջացնում օրենքի նախագծի դրույթը, որի համաձայն տեսակցությունը կարող է արգելել քրեական հետապնդումն իրականացնող մարմինը: Առաջին՝ քննիչների կարծիքի համաձայն չի բացառվում, որ տեսակցությունն արգելող որոշումը կարող է մեծ տարածում գտնել, կցվել ձերբակալման մասին գրեթե յուրաքանչյուր որոշմանը, երկրորդ՝ նման իրավունքը կարող է մեղադրյալի վրա ճնշում գործադրելու միջոց դառնալ: Այն դեպքերում, երբ քննիչը կիրառում է

ազդեցության անօրինական միջոցները եւ նրան ձեռնտու չէ այդ մասին հայտնի դառնալը, տեսակցվությունը կարգելվի տարածված ձեւակերպմամբ՝ «քննության գաղտնիությունն ապահովելու նպատակով»: Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար կլինէր, ինչպէս կալանքի վերցնելու մասին որոշումը տեսակցության արգելումն էլ լինէր դատարանի իրավասությունը: Եվ այս փուլում, ներկայիս օրենքի պայմաններում, եւ այն դեպքում, եթէ օրենքի նախագիծն ընդունվի ներկայիս ձեւով, եւ եթէ արգելման իրավունքը տրվի դատարանին, ամեն դեպքում անհրաժեշտ է անցկացնել քարոզչական աշխատանք իրավապահ մարմինների աշխատակիցների, քննիչների, դատավորների հետ ձերբակալված եւ կալանավորված անձանց ընտանեկան կյանք ունենալու եւ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու իրավունքի մասին (Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիա, Եվրոպական Պենիտենցիար կանոններ, ՄԱԿ-ի ...նվազագույն ստանդարտ կանոններ եւ այլն): Առանց էական հիմքի այս իրավունքի չպահպանումը հանգեցնում է մարդու իրավունքների ռոտնահարման, ինչը կարող է բերել ՄԱԿ-ին եւ Ստրասբուրգում Մարդու իրավունքների Եվրոպական դատարան դիմումներին:

Մոնիտորինգի ընթացքում տեղի ունեցան զրույցներ տեսակցությունների անցկացման համար պատասխանատու աշխատակիցների հետ: Նրանց պատասխանները տեսակցությունների անցկացման կարգի, կալանավորների եւ նրանց հարազատների իրավունքների եւ պարտականությունների, տեսակցությունների տեղողության, դրանք ընդհատելու հնարավորությունների մասին էապէս տարբերվում էին միմյանցից: Պարզ դարձավ, որ վարչակազմի աշխատակիցներն ունեն իրենց մասնագիտացումը բարձրացնելու, դասընթացներ անցնելու (այդ թվում՝ միջազգային ստանդարտները եւ մարդու իրավունքները սովորեցնող ) անհրաժեշտություն:

Մինչև նոր օրենքի ընդունումը նամակագրության հարցը դեռևս կլինի մեծ խնդիր, քանի որ գործող օրենսդրությունը նախատեսում է ոչ միայն նամակագրության թույլտվությունը, այլև գրաքննությունը, ինչը նախ խախտում է Սահմանադրությունը, երկրորդ՝ կապված է տեխնիկական բարդությունների հետ. գրաքննիչների, գրաքննության մեխանիզմների եւ այլնի առկայություն (ավելի ճիշտ՝ բացակայություն): Օրենքի ընդունումից հետո իրավիճակն էապես պետք է բարեփոխվի: Դարձյալ անհրաժեշտ է մարդկանց տեղեկացնել իրենց իրավունքների մասին, մտածել անձնական նամակագրության համար կալանավորներին պարբերաբար գոնե մեկ երկու ծրարներ, նամականիշեր, թուղթ, գրիչներ անվճար տրամադրելու ուղղությամբ:

Նոր օրենքի ընդունման պարագայում պետք է հատուկ ուշադրություն դարձնել ազատագրկման վայրերի նկատմամբ հասարակական հսկողություն սահմանելու վրա: Նման ինստիտուտի առկայությունը նախատեսվում է օրենքով, սակայն պարզ չէ ինչպես է ընթանալու հասարակական կազմակերպությունների ընտրությունը, հաշվառումը, գործունեությունը: Պետք է նշել, որ միջազգային բոլոր ստանդարտները նախատեսում են բացության սկզբունքը: «Կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքը բացության սկզբունքն է. բանտերը եւ ազատագրկման այլ վայրերը պետք է բաց լինեն արտաքին եւ անկախ հետաքննությունների համար, իսկ կալանավորված մարդիկ պետք է ունենան կապ արտաքին աշխարհի հետ» («Ինչպես գործի դնել ստանդարտները»): Հասարակական հսկողության իրականացման համար անհրաժեշտ է կարգի բերել քննչական մեկուսարանների փաստաթղթերը, գրագրությունը, մասնավորապես՝ վարել դիտորդների համար մատչելի տեսակցությունների առանձին մատյան, այլ ոչ թե տեղեկությունները գրանցել միայն անհատական քարտերի մեջ: Անհրաժեշտ է մատչելի դարձնել տեսակցություններն արգելող որոշումները,

իսկ անհիմն գրաքննության, նամակների արգելման դեմ բողոքների առկայության դեպքում, ծանոթանալ գրաքննությանը արգելված նամակներին եւ այլն:



## Վերջաբան

Անցկացրած մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ ՀՀ քննչական մեկուսարաններում մինչևի դատավճռի ուժի մեջ մտնելը չի կիրառվում կալանավորներին տեսակցություն եւ անձնական նամակագրություն տրամադրելու պրակտիկան: Չնայած այն բանին, որ գործող օրենքի համաձայն եւ տեսակցությունը, եւ նամակագրությունը հնարավոր են քրեական գործը վարող մարմնի թույլտվությամբ, իրականում օրենքը կիրառվում է բացառիկ դեպքերում: Հիմնականում տեսակցությունն ու նամակագրությունը քննչական մեկուսարաններում թույլատրվում են դատավճիռը կայացնելուց հետո, մինչև գաղութ տեղափոխությունը:

Նախնական կալանքի ընթացքում, այսինքն՝ ներքին գործերի մարմիններ բերման ենթարկելուց անմիջապես հետո, Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն անհրաժեշտ է ձեռքարկվածի մերձավոր հարազատներին տեղեկացնել ձեռքարկության եւ գտնվելու վայրի մասին: Օրենսդրական նման միջոցը պետք է փոփոխության ենթարկվի, քանի որ միջազգային հաստատությունների առաջարկությունների համաձայն ցանկալի է, որ ձեռքարկվածն ունենա անձամբ զանգելու հնարավորություն եւ նրան, ում անհրաժեշտ է համարում, եւ ոչ թե անպայման մերձավոր հարազատներին: Հարցումները ցույց տվեցին, որ գործող օրենքի պայմաններում հանդիպում են դեպքեր, երբ ձեռքարկության մասին հարազատներն իմանում են մի քանի օր հետո:

Լուրջ խնդիրներ են առկա տեսակցությունների տրամադրման հարցում: Մույն իրավունքը իրականացնելիս նույնպես առկա են լուրջ խոչնդոտներ: Այս անգամ ոչ հստակ օրենսդրությանը, ավանդույթների բացակայությանը ավելանում են նաեւ բազմաթիվ տեխնիկական պրոբլեմներ, որոնց լուծումների համար անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ:

Օրենսդրական եւ տեխնիկական խնդիրների հետ մեկտեղ պակաս դեր չեն խաղում սոցիալ-հոգեբանական խնդիրները: Տոտալիտար համակարգի պայմաններում ձեւավորված մտածելակերպը, իր մեջ ներառում է, որ կալանքի տակ առնելը նախատեսում է հասարակությունից խիստ մեկուսացում, ոչ մի տեսակցության եւ մանավանդ նամակագրության մասին խոսք լինել չի կարող: Սա վերաբերվում է եւ քննիչներին, եւ նույնիսկ կալանավորներն ու նրանց բարեկամներին, որոնք հաճախակի տեղյակ էլ չեն նամակագրության եւ տեսակցության իրավունքի մասին: Սա նշանակում է, որ չնայած նախապատրաստվող նոր օրենսդրությանը, օրենքը իրականում կաշխատի միայն այն դեպքում, եթե քննիչները մեխանիկորեն չկայացնեն տեսակցություններն արգելող որոշումները, չօտագործեն տեսակցություններն արգելելու իրենց իրավունքը որպես քննության տակ գտնվող անձի վրա ճնշում գործադրելու միջոց: Եթե իրենք կալանավորներն ու նրանց բարեկամները տեղյակ լինեն իրենց իրավունքներից եւ պայքարեն դրանք պաշտպանելու համար. կղիմեն տեսակցություն ստանալու խնդրանքով, կգրեն նամակներ, կբողոքարկեն անհիմն մերժումներն ու գրաքննության մասին որոշումները: Այդ նպատակով անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների եւ փաստաբանների ակտիվ քարոզչական աշխատանք կալանավորների, նրանց բարեկամների հետ, պետք են պարբերական սեմինարներ, դասընթացներ իրավապահ մարմինների աշխատակիցների, քննիչների, դատավորների համար:

Այսպիսով, գոյություն ունեցող իրավիճակը կարող է բարելավվել հետեւյալ ճանապարհով.

- օրենսդրական փոփոխություններ,
- կիրառվող պրակտիկայի փոփոխություն,

- հանձնուժի ընդունման կետերի եւ տեսակցությունների սենյակների վերակառուցում,
- իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացում,
- բնակչության իրավակրթական մակարդակի բարձրացում:

## Ծանոթագրություն

Մոնիտորինգն անցկացնելու ընթացքում տեղի ունեցավ քննչական մեկուսարանների փոխանցում ՆԳՆ վարույթից Արդարադատության նախարարության վարույթ, որից հետո նրանք վերանվանվեցին: Հաշվետվության տեքստում կիրառվել են մեկուսարանների հին անվանումները: Նորերը հետեւյալն են՝

1. N1 քննչական մեկուսարան, ք. Երեւան – ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ,
2. N2 քննչական մեկուսարան, ք. Գյումրի - ՀՀ ԱՆ «Գյումրի» քրեակատարողական հիմնարկ,
3. N3 քննչական մեկուսարան, ք. Վանաձոր - ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ,
4. ք. Գորիսի քննչական մեկուսարան - ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ,
5. N5 քննչական մեկուսարան (ք. Երեւան, վարչական մարմինների աշխատակիցներ) - ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ,
6. ք. Աբովյանի քննչական մեկուսարան (կանայք եւ անչափահասներ) - ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:

Հաշվետվությունը պատրաստ լինելուց հետո մենք նորից այցելեցինք ՀՀ ԱՆ քրեակատարողական «Նուբարաշեն» հիմնարկի հանձնուքի ընդունման կետը: Այն վերանորոգվել է՝ պատերը ներկվել են, սպիտակեցվել: «Մահապատժի դատապարտված անձանց» խոսքերով սկսվող ցուցակի կողքին ավելացել է թույլատրված ապրանքների նորմալ ցուցակը: Պատուհանի

վերելը փակցված բոլոր կարգադրությունները տեղափոխվել են, փակցվել կողքի պատի վրա, հերթն այժմ չի խանգարում դրանց հետ ծանոթանալուն, այցելուների համար ավելի հարմար են դրված սեղաններն ու նստարանը, այժմ ավելի հարմար է կազմել հանձնուքի ցուցակը կամ սպասել պատասխանի:

## Օրենսդրություն

### ՀՀ Սահմանադրություն

#### Հոդված 20

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

#### Հոդված 41

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

### Միջազգային օրենսդրություն

**«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիա»**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրա-

Ժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև՝ անկարգությունների, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:

**«Քոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու, ուլքեր ենթարկվել են ձերբակալման կամ կալանավորման ցանկացած ձևով»**, հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեի 43/173 որոշմամբ 1988 թ. դեկտեմբերի 9-ին.

«Եզրույթներ՝

«ձերբակալված անձ» նշանակում է ցանկացած անձնավորություն, որ գրկվել է անձնական ազատությունից կատարված իրավախախտման համար չդատապարտվածության արդյունքում,

«կալանքը» անձին ձերբակալելու գործողություն է՝ հիմնված որեւէ իրավախախտման համար կասկածի կամ որեւէ մարմնի որոշման վրա»:

### Սկզբունք 16.

«Ձերբակալությունից անմիջապես հետո եւ ձերբակալման կամ կալանավորման մի տեղից մյուսը տեղափոխվելուց հետո, ձերբակալված կամ կալանավորված անձը իրավունք ունի դիմելու իրավասու մարմնին իր ընտանիքի անդամներին կամ իր ընտրությամբ համապատասխան անձանց ձերբակալման, կալանավորման, բանտարկության կամ տեղափոխման եւ իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու խնդրանքով»:

### Սկզբունք 19.

«Ձերբակալված կամ կալանքի մեջ գտնվող անձին մասնավորապես տրվում է ընտանիքի անդամների իրեն այցելելու, նրանց հետ նամակագրություն հաստատելու իրավունք, ինչպես նաև՝ օրենքով նախատեսված տրամաբանական պայմաններին եւ սահմանափակումներին համապատասխան, օրենքով սահմանված կանոններով արտաքին աշխարհի հետ շփվելու իրավունք»:

### ***«Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ»***

(Ընդունվել են հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից, Ժնև, 1955թ., հավանության են արժանացել ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 1957 թ. հուլիսի 31-ի 633 C (XXIV) եւ 1977 թ. մայիսի 13-ի 2076 (LXII) բանաձեւերով).

84. «Քրեական հանցագործության մեղադրանքով ձերբակալված կամ բանտարկված անձինք, ովքեր պահվում են ոստիկանական տեղամասերում կամ բանտային հիմնարկներում, բայց դեռեւս չեն կանչվել դատարան եւ չեն դատապարտվել ... անվանվում են «քննության տակ գտնվող» բանտարկյալներ»:

92. « Քննության տակ գտնվող բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ընտանիքին անհապաղ տեղեկացնել իրենց բանտարկության փաստի մասին, օգտվել բարեկամների ու ընկերների հետ հանդիպելու բնական հնարավորությունից, նրանց ընդունելով բանտում, ենթարկվելով միայն այն սահմանափակումներին ու հսկողությանը, որոնք անհրաժեշտ են արդարադատությունը պատշաճորեն իրականացնելու,



հիմնարկում աշխատանքի կանոնավոր ընթացքն ապահովելու եւ անվտանգության պահանջները պահպանելու համար»:

**«Եվրոպական Պենիտենցիար կանոններ»** («Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» վերանայված տեքստ)

«Դատի ենթարկված կամ քննության տակ գտնվող կալանավորներ» հասկացության մեջ մտնում են այն անձինք, որոնք «գտնվում են արգելանքի տակ քրեական հանցագործություն կատարելու պատճառով նրանց ներկայացված մեղադրանքի համար, բայց որոնք դեռ չեն դատապարտվել եւ չեն կանգնել դատարանի առջեւ»:

92.1 «Քննության տակ գտնվողները կամ ամբաստանյալներն ունեն իրենց ընտանիքին կալանավորման մասին անմիջապես տեղեկացնելու իրավունք, եւ նրանց տրվում են բոլոր տրամաբանական հնարավորությունները շփվելու ընտանիքի, բարեկամների եւ այն անձանց հետ, որոնց հետ շփումները նրանց համար օրինական շահ են ներկայացնում»:

92.2 «Նրանց նաեւ պետք է թույլատրվեն այդ անձանց հետ արժանավայել պայմաններում տեսակցություններ՝ հսկողության տակ եւ որոշակի սահմանափակումներով, որոնք անհրաժեշտ են արդարադատության շահերի, անվտանգության եւ ազատագրվման վայրի կարգապահությունը պահելու համար»:

## Տեղական օրենսդրություն

**«Հայկական ԽՍՀ –ում նախնական կալանքի վերցնելու կանոնադրություն», 1969 թ.**

Հոդված 12. «Կալանքի վերցված անձանց տեսակցություններ թույլ տալու կարգը».

«Կալանքի վերցված անձանց իրենց ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցություններ կարող է թույլ տալ նախնական կալանքի վայրի վարչակազմը միայն այն անձի կամ մարմնի թույլտվությամբ, որի վարույթում գտնվում է տվյալ գործը: Տեսակցության տեսողությունը սահմանվում է մեկից մինչև երկու ժամ: Այն անձը կամ մարմինը, որի վարույթում գտնվում է գործը, կարող է տեսակցություն թույլ տալ, որպես կանոն, ամսական ոչ ավելի քան մեկ անգամ»:

Հոդված 13.

«Կալանքի վերցված անձինք կարող են ազգականների կամ այլ քաղաքացիների հետ նամակագրություն ունենալ այն անձի կամ մարմնի թույլտվությամբ, որի վարույթում գտնվում է գործը:

Կալանքի վերցված անձանց գանգատները, դիմումներն ու նամակները ստուգվում են նախնական կալանքի վայրի վարչակազմի կողմից: Դատախազին հասցեագրված գանգատները, դիմումներն ու նամակները ստուգման ենթակա չեն եւ հասցեատիրոջն են ուղարկվում դրանք հանձնելու պահից մեկ օրվա ընթացքում»:

## ***ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք***

### **Հոդված 63, կետ 9**

«Արգելանքի վերցվելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ օտարերկրյա պետության քաղաքացի լինելու դեպքում՝ տվյալ պետության դեսպանատուն կամ հյուպատոսարան տեղյակ պահել կալանքի տակ պահելու իր տեղի մասին»:

***«Ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի նախագիծ.***

**Հոդված 13.** «Ձերբակալված եւ կալանավորված անձանց իրավունքները».

Կետ 9. «Հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, այդ թվում պահպանել նամակագրություն, ունենալ տեսակցություններ, օգտվել հեռախոսակապից, գրականությունից եւ լրատվական միջոցներից, ստանալ ծանրոցներ, հանձնուքներ, փաթեթներ»

**Հոդված 15.** «Պաշտպանի, մերձավոր ազգականների եւ այլ անձանց հետ տեսակցելը»

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Քննության շահերից ելնելով ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ տեսակցություններ տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի աշխատողների հսկողությամբ: Այդ անձանց կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց արգելված առարկաներ, քրեական գործի արդարացի քննությանը խոչընդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը կամ փոխանցելու փորձը կարող է հանգեցնել տեսակցության վաղաժամկետ դադարեցման:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ձերբակալված անձին կարող է տրամադրվել նվազագույնը մեկ տեսակցություն մինչեւ մեկ ժամ տեւողությամբ, իսկ կալանավորված անձին ամսվա ընթացքում նվազագույնը երկու տեսակցություն մինչեւ երեք ժամ տեւողությամբ»:

### Հոդված 17.

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց կապն ընտանիքի եւ արտաքին աշխարհի հետ».

«Ձերբակալվածներին պահելու վայրի եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը ստեղծում են համապատասխան պայմաններ ձերբակալված եւ կալանավորված անձանց կապն ընտանիքի եւ արտաքին աշխարհի հետ ապա-

հովելու համար: Այդ նպատակով ստեղծվում են տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ: Ձերբակալված եւ կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման:

Նամակագրությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով եւ առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է հիմնարկի վարչակազմը կամ, անհրաժեշտության դեպքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի անունով տեղափոխման պատճառով նրա բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր»:

## Հոդված 22.

«Ձերբակալված անձը արգելանքի տակ գտնվելու ընթացքում կարող է ստանալ մինչեւ 20 կգ հանձնուքներ, իսկ կալանավորված անձը ամսվա ընթացքում մինչեւ 70 կգ: Ձերբակալված կամ կալանավորված անձանց անունով ստացված դրամը փոխանցվում է նրանց անձնական հաշիվ: Ձերբակալված եւ կալանավորված անձինք իրենց միջոցներից կարող են դրամական փոխանցումներ կատարել ազգականների եւ այլ անձանց: Բժշկի եզրակացությամբ կարիքն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձանց անունով ստացվող դեղորայքի քանակը չի սահմանափակվում: Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին փոխանցել այնպիսի

նյութեր, առարկաներ, որոնք մարդկանց առողջությանը վտանգ են սպառնում կամ կարող են խոչընդոտել արգելանքի եւ կալանքի տակ պահելու խնդիրների իրականացմանը»:

## Գրականության ցանկ

1. Права человека и судопроизводство. Собрание международных документов.
2. Проблема предварительного заключения в регионе ОБСЕ. Обзорная конференция ОБСЕ. Сентябрь 1999г. Справочный документ БДИПЧ.
3. Ինչպես գործի դնել միջազգային ստանդարտները. Միջազգային ստանդարտների արդյունավետ կիրառման գործնական ձեռնարկ: Եր.: Հրազդան, 2001
4. Права человека и пенитенциарные учреждения. Учебное пособие по правам человека для персонала пенитенциарных учреждений. Пилотное издание. Женева, 2000г.